# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՅՕԲԵԼ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՋԸ

I

Երէկ մենք յայտնեցինք, որ «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթար հրաժարական ուղարկեց Մեսրոպ եպիսկոպոսին ապրիլի 22-ին ընտրված թեմական յոբել. յանձնաժողովի անդամակցութիւնից։

Հասարակութեան լուսաբանութեան համար հարկաւոր ենք համարում հաղորդել հետևեալ փաստացի տեղեկութիւնները։

Թիֆլիսի յոբելեանական մասնաժողովը, որ գործում էր Հ. Առաքելեանի նախագահութեամբ, իր գործունէութեան հիմք ընդունել էր Էջմիածնի յայտարարած ծրագիրը և դպրոցական ֆոնդը։ Նա դիմել էր Կաթողիկոսին, խնդրելով հաստատել իրան։ Այդ միջոցին այն յանձնախումբը, որ առաջ ընտրվել էր և գործում էր Լէօի ու բժ. Զարգարեանի նախագահութեամբ և յայտարարել էր իրան հակառակ Էջմիածնի ծրագրին, դիմում է Մեսրոպ եպիսկոպոսին՝ խնդրանօք միացնել երկու մարմինները։ Եպիսկոպոսը դիմեց Թիֆլիսի մասնաժողովին. վերջինս յօժարութիւն յայտնեց, առաջարկելով որոշ պայմաններ, այն է՝ դըպրոցական ֆոնդը և մասնաժողովի կողմից 12 հոգու ընտրութիւնը՝ տալով իրաւունք ընտրել 12 հոգի միւս յանձնախմբից։ Այս պայմանների հիման վրա միութիւնը հնարաւոր էր։ Ժողովը սակայն ճշդութեամբ չը կատարեց առաջարկված պայմանները և դրանով լիակատար իրաւունք տուեց Թիֆլիսի մասնաժողովին՝ չը համարել իրան լուծված։

Իբրև բացատրութիւն, հարկ ենք համարում զետեղել այստեղ երկու գրութիւն. 1) ապրիլի 22-ի ժողովում կարդացված գրութիւնը «Մշակ» լրագրի և «Արօր» ամսագրի խմբագրութիւնների կողմից և 2) Քալանթարի պատճառաբանեալ հրաժարականը.

II

Վրաստանի և Իմէրէթիայի առաջնորդ սրբազան Մեսրոպ եպիսկոպոսին.

Ի պատասխանի ձերդ սրբազնութեան հրաւիրագրին ուղարկել երկ-երկու ներկայացուցիչներ այսօրվայ ժողովին մասնակցելու համար՝ «Մշակ» լրագրի և «Արօր» ամսագրի խմբագրութիւնները պատիւ ունեն յայտնել, որ իրանք պատրաստ են մասնակցել մի նոր յոբել. յանձնաժողովի ընտրութեան այն պայմաններով, որոնք բացատրված են Թիֆլիսի յոբել. մասնաժողովի որոշման մէջ։

«Մշակի» և «Արօրի» խմբ.

III

Թիֆլիս, 23 ապրիլի

Ձերդ սրբազնութիւն.

Առաջնորդարանում տեղի ունեցած երէկվայ ժողովում ընտրվել եմ յանձնաժողովի անդամ և ես։

Յայտնելով իմ շնորհակալութիւնը բոլոր այն անձերին, որոնք պատուել են ինձ իրանց ընտրական քուէներով, պէտք է ներողութիւն խնդրեմ, որ անկարող եմ օգտվել ինձ արված մեծ պատւից հետևեալ պատճառով։

Մինչև այդ ընտրութեան կայանալը գոյութիւն ունէին Թիֆլիսում երկու յոբելեանական յանձնաժողովներ, մէկը Լէօի և Զարգարեանի նախագահութեամբ, միւսը Հ. Առաքելեանի նախագահութեամբ։

Վերջին յանձնաժողովի անդամները պատրաստակամութիւն յայտնեցին միանալու մի ընդհանուր կազմակերպութեան մէջ, եթէ երկու կողմերից էլ հաւասար թւով ներկայացուցիչներ ընտրվեն։ Եւ անկասկած՝ պարզ արդարութիւնը թելադրում էր, որ ներկայացուցիչներ ընտրելու գործը թողնված լինէր իրանց յանձնաժողովներին։

Արդ՝ երէկվայ ժողովը ինքն է վերցրել իր վրա ներկայացուցիչներ ընտրելու լիազօրութիւնը և թողնելով ընտրեալների ցուցակի առաջին յանձնաժողովի նախագահներին՝ հանել է ցուցակից երկրորդ յանձնաժողովի նախագահին։

Երկուսից մէկը. կամ պէտք էր ընտրել երկու կողմի նախագահներին և կամ պայմանաւորվել չընտրելու նրանցից ոչ մէկին. յամենայն դէպս այդ հանգամանքը պէտք է նախատեսնված լինէր ընդհանուր համաձայնութեամբ։

Գտնելով այդ գործողութիւնը իմ տեսակէտով ոչ էտիկական, պարտականութիւն եմ համարում յայտնել ձերդ սրբազնութեան, որ ես անկարող եմ ընդունել իմ ընտրութիւնը մինչև կատարված սխալի ուղղումը։

Ա. Քալանթար

IV

«Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը Թիֆլիսի թեմի առաջնորդի հրաւէրին՝ ուղարկել երկու ներկայացուցիչ, մասնակցելու ապրիլի 22-ին առաջնորդարանում կայանալիք ժողովին, հայ տառերի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանական մասնաժողով ընտրելու համար, պատասխանել է պաշտօնական գրութեամբ, որ ապօրինի է համարում իր մասնակցութիւնը այդ ժողովին, քանի որ «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը մասնակցել է բօրսայում կայացած ընդհանուր ժողովին և ընտրված մասնաժողովին լիազօրութիւն է տուել որոշ հրահանգով, Կաթողիկոսի հաստատված ծրա-

---

նէութիւնը և մաքիավելլիական քաղաքականութիւնը։

Այդ քաղաքականութեան թունաւոր ալիքները անարգել հասան նոյնիսկ մինչև Շվէյցարիա և, ոտնակոխ անելով եւրոպական պետութիւնների մէջ ունեցած նրա չէզոք դիրքը, խլեցին նրա ներքին իրաւունքներից մէկը։ Մեր խօսքը վերաբերում է «Գօթարի համաձայնութեանը», որ կարողացան գլուխ բերել նորերս Գերմանիան և Իտալիան, մի համաձայնութիւն, որ իրաւունք է տալիս գերմանական և իտալական երկաթուղիներին այսուհետև անմիջական հաղորդակցութիւն ունենալ իրար հետ՝ անցնելով Շվէյցարիայի Սէն-Գօթար լեռան մէջ փորված թունելով և որը ժողովրդական մեծ յուզմունքների, բազմաթիւ ցոյցերի ու զայրագին բողոքների առիթ տուեց Շվէյցարիայի յատկապէս ֆրանսիական կանտօններում։

Այսքանը, կարծում ենք, բաւական է պարզելու համար այն նպատակը, դէպի ուր դիմում է երրեակ դաշնակցութիւնը—հակակշռել երրեակ համաձայնութեանը ամեն գնով ու միջոցներով և գերակշռել նրան ամեն կերպ։

Տարօրինակ է սակայն, որ երրեակ համաձայնութիւնը այս բոլորի հանդէպ այնքան աչք փակեց, այնքան լռեց ու անտարբեր գտնվեց, որ այսուհետև նրան դժուար կը լինի զսպել իր ախոյեանին և պայքարել նրա դէմ՝ առաջն առնելու այն բարդութիւնների, որոնք կը յարուցվեն անխուսափելիօրէն Բալկանեան թերակղզում և դրանց հետևանքով՝ ամբողջ Եւրոպայում։

Ժընէվ — Ա. Չ.